**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ք. Եղեգնաձոր

<<21>> մայիսի 2014թ N 40

<< ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ , ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, << Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի բ/ ենթակետի պահանջով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության << Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու մասին>> 1998 թ. հոկտեմբերի 12-ի № 624 որոշումը և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից իրականացված պլանային ստուգումների հիման վրա կազմված № 8 արձանագրությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջարկել Մալիշկա համայնքի ղեկավար Մ.Մովսիսյանին ՝ հատուկ քննարկման առարկա դարձնել Մալիշկայի գյուղապետարանի կողմից սահմանված կարգի խախտումով կատարված , շինարարության /քանդման/ թույլատվությունների տրամադրման, ավարտական ակտերի ձևակերպման , ինքնակամ շինարարության կանխարգելման և վարչաիրավական խախտումների վերաբերյալ համայնքում իրականացվող աշխատանքներին և իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց տալ պարտադիր կատարման ցուցում , քաղաքաշինության բնագավառում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով:

Ե. ՂԱԶԱՐՅԱՆ